ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԻ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Կ-144-20.05.2019-ՏՏԳԲ-011/0 «Տարածքային կառավարման մասին», **Կ-144³-20.05.2019-ՏՏԳԲ-011/0** «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծերի վերաբերյալ ներկայացված առաջարկներ

ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՆԱԽԱԳԾԻ ԱՅՆ ՄԱՍԸ, ՈՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՑՈՂԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ
Կ-144-20.05.2019-ՏՏԳԲ-011/0«Տարածքային կառավարման մասին» օրենքի նախագիծ				
Աժ պատգամավոր Մերի Գալստյան	Նախագծի 7-րդ հոդված	Կառավարության տարածքային քաղաքականության իրագործման հիմնական բնագավառների ցանկում ավելացնել <<զբոսաշրջությունը>>, որպես առանձին բնագավառ:	Զբոսաշրջության բնագավառը դիտարկվել է «տնտեսության զարգացում» բնագավառի ներքո:	
		Հոդվածի 1-ին կետի 9-րդ ենթակետում <<բնապահպանություն>> տերմինը փոխել <<շրջակա միջավայրի պահպանություն>> տերմինով՝ համապատասխանեցնելով նախագծի 16-րդ հոդվածի վերնագրի հետ՝ <<Մարզպետի լիազորությունները	Ընդունվել է:	Ընդունվել է:

		շրջակա միջավայրի պահպանության բնագավառում>>		
		Հոդվածի 1-ին կետի 8-րդ ենթակետում ավելացնել երիտասարդության բնագավառը և շարադրել հետևյալ կերպ՝ <<Մշակույթ, սպորտ և երիտասարդություն>>:	Ընդունվել է:	Ընդունվել է:
	Նախագծի 15-րդ հոդված	հոդվածի վերնագիրը շարադրել հետևյալ կերպ՝ <<Մարզպետի լիազորությունները մշակույթի, սպորտի և երիտասարդության բնագավառներում>> և վերոնշյալ հոդվածում ավելացնել մարզպետի համապատասխան լիազորությունները մարզային երիտասարդությանն առնչվող հարցերում:	Ընդունվել է:	Ընդունվել է:
	Նախագծի 16-րդ հոդված	հոդվածի 1-ին կետում ավելացնել 2-րդ, 3-րդ և 4-րդ ենթակետեր հետևյալ բովանդակությամբ՝ «2) Իրականացնում է վերահսկողություն մարզի տարածքում իր ենթակայության տակ գտնվող կառույցներում, ընդհանուր օգտագործման հողային տարածքներում բնապահպանական օրենսդրությամբ ամրագրված նորմերի նկատմամբ և հայտնաբերված իրավախախտումների մասին տեղյակ է պահում բնապահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի համապատասխան տարածքային ստորբաժանմանը օրենսդրությամբ սահմանված ժամկետներում՝ միաժամանակ միջոցներ ձեռնարկել իրավախախտումը կանխելու համար: 3) Աջակցում է մարզում առկա արգելոցների, արգելավայրերի, հատուկ պահպանվող գոտիների պահպանությանն ու օգտագործմանը, որսագողությանը, ապօրինի ձկնորսության և	Բնապահպանական օրենսդրությամբ ամրագրված նորմերի նկատմամբ վերահսկողության լիազորությունը վերապահված է համապատասխան տեսչական մարմնին, հետևաբար, նույն լիազորությունը մարզպետներին վերապահելը նպատակահարմար չէ: Աջակցությանն ուղղված լիազորությունների հարցը կարգավորված է	

		ծառահատումներ դեմ կազմակերպվող միջոցառումների իրականացմանը: 4) Աջակցում է մթնորոլտի, օդի, ջրի, հողի և կենսաբազմազանության վերաբերյալ մշտադիտարկման աշխատանքներին՝ շրջակա միջավայրի պահպանության ոլորտում պետական լիազոր մարմնի մարզային կառույցների և բնապահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի համապատասխան ստորաբաժանումների հետ համագործակցությամբ:	Օրենքի նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 12-րդ կետով Աջակցությանն ուղղված լիազորությունների հարցը կարգավորված է Օրենքի նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 12-րդ կետով	
		Նախագծում ավելացնել առանձին հոդված հետևյալ վերնագրով՝ <<Մարզպետի լիազորությունները զբոսաշրջության բնագավառում>>:	Զբոսաշրջության բնագավառը դիտարկվել է «տնտեսության զարգացում» բնագավառի ներքո:	
		Որպես առաջարկ ներկայացնում եմ ստորև բերված կետերը՝ զբոսաշրջության բնագավառում մարզպետի լիազորությունների շրջանակում դիտարկելու համար. 1) Տարածքային կառավարման մակարդակում իրագործում է Կառավարության քաղաքականությունը զբոսաշրջության ոլորտում: 2) Իրականացնում է զբոսաշրջության խթանմանն ուղղված միջոցառումներ, մասնավորապես՝ մարզի տարածքում գտնվող պատմաշմակութային ժառանգության, բնական հուշարձանների և ռեկրեացիոն ռեսուրսների քարտեզագրում և պարբերական թարմացում: 3) Իրականացնում է մարզում զբոսաշրջային ենթակառուցվածքների, ռեսուրսների և	Դիտարկվում է նախագծի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ներքո: 2-րդ և 3-րդ կետերով առաջարկված Լիազորությունների ամրագրումը որոշակի հակասություններ կառաջացնի Զբոսաշրջության պետական կոմիտեին վերապահված լիազորությունների հետ:	

		ծառայությունների գնահատում և դրանց զարգացմանն ուղղված գործողություններ: Աջակցում է տեղական ինքնակառավարման մարմիններին համայնքներում զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների ձևավորմանը և զբոսաշրջային ծառայությունների որակի բարելավմանը:	Աջակցությանն ուղղված լիազորությունների հարցը կարգավորված է Օրենքի նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 12-րդ կետով	
ԱԺ պատգամավոր Վարազդատ Կարապետյան		Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 7-րդ հոդվածով սահմանվում է կառավարության տարածքային քաղաքականության իրագործման հիմնական բնագավառները, որոնց հիման վրա էլ Նախագծով սահմանվել են մարզպետի ըստ բնագավառների լիազորությունները, առաջարկվում է Նախագծի օրենքի կարգավորման առարկան սահմանող 1-ին հոդվածում «տարածքային կառավարման սկզբունքները» բառերից հետո լրացնել «կառավարության տարածքային քաղաքականության իրագործման հիմնական բնագավառները» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
		Օրենքի նախագծից բացակայում է տարածքային կառավարման մասին օրենսդրությունը, որը որպես իրավունքի աղբյուր, պետք է հիմք հանդիսանա ոլորտի հարաբերությունները կարգավորելու համար: Առաջարկվում է Նախագիծը 1-ին հոդվածից հետո լրացնել նոր հոդվածով հետևյալ բովանդակությամբ՝ «Հոդված 2. Տարածքային կառավարման մասին օրենսդրությունը 1. Հայաստանի Հանրապետությունում տարածքային կառավարման հետ կապված հարաբերությունները	Ընդունվել է:	Ընդունվել է:

		կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենքով և տարածքային կառավարման իրավահարաբերությունները սահմանող այլ նորմատիվ իրավական ակտերով:»:		
	Նախագծի 4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածով սահմանվում է մարզպետի աշխատակազմի հետ կապված իրավակահարաբերությունները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մարզպետի աշխատակազմը ըստ էության ձևավորվում է օրենքով մարզպետին վերապահված լիազորությունները և գործառույթները իրականացնելու նպատակով, ուստի օրենսդրական տեխնիկայի կանոնների պահպանման տեսանկյունից նպատակահարմար է այդ հոդվածը շարադրել ոչ թե «Մարզպետը» վերտառությամբ 5-րդ հոդվածից առաջ, այլև «Մարզպետի նշանակման և ազատման կարգը» սահմանող 6-րդ հոդվածից հետո: Վերոգրյալը հաշվի առնելով, առաջարկվում է կատարել տեխնիկական փոփոխություն, Նախագծի 4-րդ հոդվածը շարադրել 6-րդ հոդվածից հետո:	Ընդունվել է:	Ընդունվել է:
	Նախագծի 5-րդ հոդված	Հոդվածը վերնագրված է «Մարզպետը» վերտառությամբ: Հոդվածով սահմանված իրավակարգավորումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հոդվածի վերնագիրը և բովանդակությունը չեն համապատասխանում միմյանց: Ըստ էության հոդվածի բովանդակության շրջանակում ներկայացված են մարզպետի հիմնարար բնույթ կրող լիազորությունները, որոնք կարելի է որակել որպես մարզպետի լիազորությունների ընդհանուր բնութագիրը: Հաշվի առնելով այդ հանգամանքը, առաջարկվում է Նախագծի 5-րդ հոդվածի վերնագիրը՝ «Տեղական	Ընդունվել է, հոդվածի վերնագրում կատարվել է լրացում:	Ընդունվել է:

		ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի օրինակով, սահմանել հետևյալ վերտառությամբ «Մարզպետի ընդհանուր լիազորությունները»:		
	Նախագծի 20-րդ հոդված (լրամշակված նախագծի 21-րդ հոդված)	Հոդվածը վերնագրված է «Մարզի խորհուրդ», որն ըստ էության չի արտահայտում խորհրդակցական մարմնի կարգավիճակ ունենալու հանգամանքը, չնայած նրան, որ մեջբերված հոդվածի բովանդակության մեջ նշվում է դրա խորհրդակցական մարմին լինելու մասին: Առհասարակ, խորհրդակցական մարմինը ձևավորվում է «մարզպետի» ինստիտուտի շուրջ, այլ ոչ թե «մարզ» վարչատարածքային միավորի շուրջ: Բացի այդ, մարզպետին կից պետք է կամ կարող են գործել տարբեր խորհրդակցական մարմիններ և ըստ էության Նախագծում նման կարգավորման ամրագրումը սահմանափակում է այլ խորհրդակցական մարմիններ ստեղծելու իրավական հնարավորությունները: Վերը մեջբերվածը հաշվի առնելով, առաջարկվում է Նախագծի 20-րդ հոդվածի վերնագիրը և բովանդակությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 20. Մարզպետին կից խորհրդակցական մարմինները 1. Մարզում Կառավարության տարածքային քաղաքականությունը արդյունավետ իրագործելու նպատակով մարզպետը կարող է ձևավորել խորհրդակցական մարմիններ: 2. Մարզպետին կից կարող են ստեղծվել տնտեսական զարգացման, երիտասարդության հարցերով և այլ խորհրդակցական մարմիններ: 3. Մարզպետին կից խորհրդակցական մարմնի կազմավորման և գործունեության կարգի օրինակելի ձևը սահմանվում է Կառավարության որոշմամբ:»:	Ընդունվել է մասամբ: Հոդվածը լրամշակվել է:	Ընդունվել է:

		Խորհրդարանի իրավասու հանձնաժողովում բացի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունից ներկայացվի նաև յուրաքանչյուր մարզի զարգացման ծրագիրը:	Նախագծով մարզերի զարգացման ծրագրեր չեն նախատեսվում, փոխարենը նախատեսվում են մարզերի զարգացման ռազմավարություններ, որոնց հաստատման լիազորությունը վերապահվում է Կառավարությանը: Այս ռազմավարությունների համատեքստում նախատեսվում են դրանց իրականացման տարեկան գործունեության ծրագրի մշակումը մարզպետների կողմից և հաստատումը լիազոր մարմնի կողմից: Տարեկան գործունեության ծրագիրը մեծամասամբ բովանդակում պետական բյուջեով հաստատված ծրագրերը, որոնց ՀՀ ԱԺ-ն արդեն իսկ հավանության է արժանացրել:	
	Կ-144[3]-20.05.2019-ՏՏԳԲ-011/0 «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ			
	Նախագծի 1-ին հոդված	ՏԻՄ օրենքի նախագծի հոդված 1-ի 1-ին մասում իրավական հսկողության իրականացման կարգավորումները մնան անփոփոխ, քանի որ	Ընդունվել է: Նախագիծը լրամշակվել է, որի արդյունքում փոփոխվել է նաև նախագծի	Ընդունվել է:

		գործառույթները դեռևս մարզպետներն են կատարում	վերնագիրը	